ՍՈԽԱԿ, ՎԱՐԴԵՆԻ ԵՒ ՊԱՐՏԻԶԳՈՒՆ·

Ամեն առաւօտ կանաչ պարտիզում
Վարդենուոյ ծոցից սոխակն էր երգում,
Ծաղկէ ի ծաղիկ թռչում անդադար
Եւ նորան ուխտում իւր կեանք սիրավառ·
Նա ողջ ծաղկոցում
Սիրեց վարդենուոյն·

Վարդենուոյ կանաչ ու խիտ թփերում՝
Սոխակը շինեց իրան փափուկ բոյն·
Զեփիւռը վարդենին մեղմով կօրօրէր՝
Եւ սոխակն այսպէս իւր երգը կերգէր· —
«Թէպէտ դեռ փոքրիկ
«Է իմ վարդենիկ·

«Բայց կըգայ մի օր, որ նա կուռճանայ·
«Ոստեր կարձակէ, ինձ շատ վարդ կըտայ·
«Ես էլ այն կարմիր վարդից փոխարէն՝
«Սիրով ու երգով նորան կըպաշտեմ·
«Նորա թփոց տակ
«Երջանիկ կապրեմ··

Հմուտ պարտիզպանն էլ, որ յարաժամ
Փոքրիկ վարդենուոյն կըտանէր խնամ՝
Սոխակի քաղցրը երգովն զմայլած՝
«Այս երջանկութիւն բաւ է ինձ · · · · · ասաց՝
«Այլոց ոսկիներ
«Ինձ չեն գրաւեր··

Բայց յանկարծ վատ աչք վարդենուոյն դիպաւ՝
Եւ նա օրէ ցօր թոռմիլ սկսաւ·
Կանաչ ոստերն շուտով չորացան՝
Անզօր թուփերը ներքեւ թափուեցան·
Եւ հէգ վարդենին՝
Վայր ընկաւ գետին·

Անբախտ սոխակը սրգաց ու լացեց,
Արեան արտասուք աչքերից թափեց. —
«Ո՛վ իմ, ասաց նա, քաղցրիկ վարդենի,
«Էլ քեզ աշխարհում չեմ կարող տեսնի,
«Թրուչում եմ եւ ես՝
«Ի՞նչ տեղ որ գու եռ»։

—

Քաղցրախօս սոխակ, գու լաց վարդենիդ,
Ես էլ շարունակ ողբամ երկուսիդ.
Առանց սիրելեացդ էլ ի՞նչ պարտիզպան,
Երբ գոյգ, մի տարում, մնաք գերեզման.
«Վարսենիկ, Միհրան»։
Միշտ պիտի ողբամ.

Գրաշար Նէրսէս Մոսկիսեան։

Ս. Էջմ-ծնի տպարանում։

ԱԶԳԱՑԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Մայիսի 30-ին Ս. Կաթուղիկէ Էջմիածնի տօնը փառաւոր կերպով տօնուեցաւ Մայր Աթոռոյս մէջ։ Ս. Պատարագին Ազգիս Վեհափառ Հայրապետը Եկեղեցի ելաւ, ուր եւ ներկայ էր ցվերջ Ս. Պատարագի։

Առաւօտեան ժամերգութեան աւարտմանէն 2 ժամ անցած, այն է ժամը 9-ին, Վեհարանի առաջ ի ներկայութեան Ս. Հայրապետի Միաբանական Ուխտը Մաղթանք կատարեց, յորում էին Գէորգեան ճեմարանի ուսանողք եւ Վաղարշապատի երկսեռ դպրոցաց աշակերտք եւ աշակերտուհիք, ուսուցիչք եւ ուսուցչուհիք եւ բազմաթիւ ժողովուրդք։ Մաղթանքի ժամանակ ճեմարանի սանունց կողմանէ ճառ կարդացուեցաւ. մաղթանքից յետոյ Միաբանական Ուխտը եւ ամեն ներկայ գտնուողները մատեան ի համբոյր Ս. Աջոյ Վեհափառ Հայրապետի եւ արժանացան նորին Հայրապետական սրբութեան օրհնութեանը։ Կէս օրին վայելուչ հացկերոյթներ եղան թէ Միաբանից եւ թէ ճեմարանի